ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, նոյեմբ. 8.

«Մուրճ»-ի № 9-ում տպուած հերքումս արժանացել է «Մշակ»-ի աշխատակից պ. Լ.-ի երկրորդ պատասխանին։

Համարելով՝

Որ մեր բանակռւում ծագած հարցերից միքանիսը կարելի է վերջնականապէս պարզել միայն այն ժամանակ, երբ ձեռքի տակ կ'ունենանք Գրիգոր Արծրունու աշխատութիւնների բոլոր հատորները.

Որ յատկապէս Գրիգոր Արծրունու նախամշակական յօդուածներին վերաբերեալ հարցը բոլորովին պարզուած է.

Որ պ. Լ.-ի երկրորդ պատասխանը «տոնի» կողմից՝ իմ եւ իր, պ. Լ.-ի, արժանաւորութիւնից ցած է,—ես, իմ կողմից, փակում իմ այդ վիճաբանութիւնը։

ՏԻԳՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Պ Ո Ս Տ Ա Ր Կ Ղ

ԲԱԶՄԱՎԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.—Զգիտենք ինչով բացատրել որ շարունակ մեզ շատ աւելի ուշ էք ուղարկում «Գեղունին» եւ «Բազմավէպը», քան «Մշակին»։ Խտրութեան պատճառը դժուարանում ենք բացատրել...

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ. գ. Կ. Փ.—Ուրախութեամբ կատարեցինք ձեր խընդիրքը։

ԹԻՖԼԻՍ. պ. Օ. Ֆ.—Մենք մեզ դատաւոր չենք համարում մարդկանց *մասնաւոր կեանքում,* մանաւանդ երբ ամեն ինչ հիմնուած է չճշտուած մեղադրանքների, ներսիրտ խծբծանքի եւ աւէկօսէների վրայ։ Այն բոլոր գրուածքները, որոնք հակառակ չեն իրանց *ոգուով* մեր ուղղութեան եւ աշխարհայեացքին, մենք կ'ընդունենք անաչառ գնահատումով, բնաւ չըեկավարուելով թէ սրա կամ նրա մասին ով ինչ է ասում կամ մտածում։ Մենք աշխատում ենք չզբաղուել անձնաւորութիւններով։ Այլ բան է, եթէ մէկի արարքը հասարակական արդար նշաւակութեան է արժանացել. այդ դէպքում էլ չպէտք է մոռանալ որ մարդկանց համադումարն էլ երբեմն սխալական է. մի մոռացէք Դրէյֆուսին։ Առհասարակ խորհուրդ ենք տալիս՝ կուրօրէն չենթարկուել «հեղինակութիւններին». եղէք *անկախ* ճշմարտութեան եւ արդարութեան վիճ որոնումների մէջ...